**Հավելված N 1**
ՋԿ-ԳՀԾՁԲ-20/5-Տ **ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

# ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## գնանշման հարցման մասնակցելու

**«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ** (Գործընկեր 1) և **«Թունել» ՍՊԸ** (Գործընկեր 2) **կոնսորցիում-ը** հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

Ջրային կոմիտե-ի կողմից ՋԿ-ԳՀԾՁԲ-20/5-Տ ծածկագրով հայտարարված
պատվիրատուի անվանումը

գնանշման հարցման N1 չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

**«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ** (Գործընկեր 1) և **«Թունել» ՍՊԸ** (Գործընկեր 2) **կոնսորցիում** -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

ՀՀ ռեզիդենտ:
երկրի անվանումը

**«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ** (Գործընկեր 1) և **«Թունել» ՍՊԸ** (Գործընկեր 2) **կոնսորցիում** -ի՝
մասնակցի անվանումը

հարկ վճարողի հաշվառման համարն է՝ **«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ** (Գործընկեր 1) **00012859 և «Թունել» ՍՊԸ** (Գործընկեր 2) **02542333.**
հարկի վճարողի հաշվառման համարը

- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ (Գործընկեր 1) awd@hjni.am, (Գործընկեր 2) tunnel.spy@yandex.ru.
  էլեկտրոնային փոստի հասցեն

- գործունեության հասցեն է՝ (Գործընկեր 1) ք.Երևան Վ.Վաղարշյան 12
  (Գործընկեր 2) ք.Երևան Մոսկովյան 31 փ, բն20
  գործունեության հասցեն

- հեռախոսահամարն է՝ (Գործընկեր 1) (374)010273660 (Գործընկեր 2) (374)091-20-42-91.
  հեռախոսի համարը

Սույնով **«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ** (Գործընկեր 1) և **«Թունել» ՍՊԸ** (Գործընկեր 2) **կոնսորցիում** –ն
մասնակցի անվանում

հայտարարում և հավաստում է, որ՝

1) բավարարում է ՋԿ-ԳՀԾՁԲ-20/5-Տ ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում.

2) ՋԿ-ԳՀԾՁԲ-20/5-Տ ծածկագրով գնանշման հարցման մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ **«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ** (Գործընկեր 1) և **«Թունել» ՍՊԸ** (Գործընկեր 2) **կոնսորցիում**-ին
  մասնակցի անվանումը

փոխկապակցված անձանց և (կամ) **«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ** (Գործընկեր 1) և **«Թունել» ՍՊԸ** (Գործընկեր 2) **կոնսորցիում** -ի
մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս **«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ** (Գործընկեր 1) և **«Թունել» ՍՊԸ** (Գործընկեր 2) **կոնսորցիում**-ին
մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ) և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ:

| Անունը Ազգանունը Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը | Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
|---|---|---|
| **«Յայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ** | | |
| Յուրիկ Ջավադյան Լևոնի | ն/ք 006033195 | |
| Գագիկ Ղազարյան Ավետիսի | անձնագիր AM 0553867 | |
| **«Թունել» ՍՊԸ** | | |
| Ալեքսանդր Սանահյան | ն/ք 003936457 | |

«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ (Գործընկեր 1) տնօրեն Յուրիկ Ջավադյան

JAVADYAN YURIK 1101350474

Digitally signed by JAVADYAN YURIK 1101350474
DN: cn=JAVADYANYURIK 1101350474, sn=••••••••, givenName=••••••, c=AM, serialNumber=aea5b43908c
Date: 2020.10.09 12:59:59 +04'00'

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, անուն,ազգանունը) (ստորագրություն)

«Թունել» ՍՊԸ (Գործընկեր 2) տնօրեն Ալեքսանդր Սանահյան

SANAHYAN ALEKSANDR 2410490158

Digitally signed by SANAHYAN ALEKSANDR 2410490158
DN: cn=SANAHYAN ALEKSANDR 2410490158, sn=••••••••, givenName=••••••••, c=AM, serialNumber=64f47452e75d
Date: 2020.10.09 12:59:10 +04'00'

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, անուն,ազգանունը) (ստորագրություն)

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
/ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ/

ք. Երևան 05 հոկտեմբերի, 2020թ.

<<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ /այսուհետ՝ Գործընկեր-1/, ի դեմս տնօրեն՝ Յուրիկ Ջավադյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Թունել» ՍՊԸ /այսուհետ՝ Գործընկեր-2/, ի դեմս տնօրեն՝ Ալեքսանդր Սանահյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, /միասին այսուհետ՝ Կողմեր, յուրաքանչյուրը առանձին՝ Կողմ/, կնքեցին սույն պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կողմերը պարտավորվում են միացնել իրենց կարողությունները և առանց իրավաբանական անձ կազմավորելու համատեղ մասնակցել «Ջրային կոմիտե »-ի կարիքների համար՝ «Արփա-Սևան N 2 թունելում առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման *ՋԿ–ԳՀԾՁԲ-20/5-Տ*_ծածկագրով հայտարարված ընթացակարգին և հաղթող ճանաչվելու դեպքում համատեղ իրականացնել վերը նշված աշխատանքները, համաձայն պայմանագրի <<Տեխնիկական բնութագրի>> պահանջների:

Տեխնիկական հսկողություն իրականացման համար Գործընկեր 1-ը և Գործընկեր 2-ը՝ համատեղ ունեն՝

**ա/ Մասնագիտական փորձառություն**

- Գործընկեր 1-ը և Գործընկեր 2-ը համատեղ, կոնսորցիումի սկզբունքով, <<ՀՀ ԳՆ Ջրային տնտեսության պետական կոմիտեի <<Արփա-Սևան>> թունելի վերականգնման ԾԻԳ>> ՊՀ-ի պատվերով, N ՄԲԾՁԲ-09/5 08.06.2009թ-ի պայմանագրի շրջանակներում, 2010թ սեպտեմբեր ամսից մինչև 2016թ ավարտը իրականացրել են Արփա-Սևան N2 թունելի վերականգնման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունները:
- Գործընկեր 1-ը և Գործընկեր 2-ը համատեղ, կոնսորցիումի սկզբունքով, ՀՀ ԷԵԲՊՆ Ջրային կոմիտեի պատվերով, <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԾՁԲ-ԱՍ-17/3-Տ>> պայմանագրի շրջանակներում, 2017-2019թթ իրականացրել է Արփա-Սևան

N 2 թունելում առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունները

բ/ Տեխնիկական միջոցներ

Աշխատանքների կազմակերպման համար Գործընկեր 1-ի կողմից ապահովվում է՝

- բետոնի մեջ ամրանների հայտնաբերման, նրանց հեռավորության և տրամագծի որոշման ՊՌՖՌՍԿՌՊ գործիքը;
- լրակազմ էլեկտրոնային տախոմետր;
- գծային չափումների, մակերեսի և ծավալների հաշվարկի էլեկտրոնային սարք:

Գործընկեր 2-ի կողմից ապահովվում է՝

- թունելի մեջ բետոնի ամրության ստուգման սարքը /Շմիդտի մուրճը/:

գ/ Ֆինանսական միջոցներ

Գործընկեր 1-ի և Գործընկեր 2-ի յուրաքանչյուրի համար՝

- նախորդ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից;
- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

դ/ Աշխատանքային ռեսուրսներ

Տեխ.հսկողության աշխատանքների համար Գործընկեր-1-ի կողմից ընդգրկված են երկու ինժեներ-հիդրոտեխնիկ և մեկ երկրաբան, բարձրագույն կրթությամբ, նվազագույն մասնագիտական ստաժը՝10 տարի: Գործընկեր 2-ի կողմից ընդգրկված է մեկ հիդրոտեխնիկ, բարձրագույն կրթությամբ, նվազագույն մասնագիտական ստաժը՝ 10 տարի:

ե/ Կոնսորցիումի յուրաքանչյուր կողմ ունի քաղաքաշինության բնագավառում Շինարարության որակի տեխնիկական հսկողության- Հիդրոտեխնիկական լիցենզիա:

## 2.Գործերի վարումը

2.1. Սույն պայմանագրի ներքո և դրա շրջանակներում կնքված պայմանագրերի գծով Գործընկեր 1-ը՝

- հանդես է գալիս Կողմերի անունից, պատասխանատու է նրանց համար, միաժամանակ իրավասու է ընդունել որոշումներ իր կամ Գործընկեր 2-ի կամ Կողմերի համար, համաձայնեցնելով Գործընկեր- 2-ի հետ :
- վարում է ընդհանուր գործերը, կնքվող պայմանագրերի կատարման հետ կապված գործողությունները, Կողմերի անունից իրավասու է ստորագրել և կնքել գործարքներ/պայմանագրեր/փաստաթղթեր,

- իրավասու է ինքնուրույն կառավարել և տնօրինել ֆինանսական միջոցները, ստանալ պայմանագրերից վճարման ենթակա գումարները , վարել համատեղ գործունեության հաշվապահական հաշվառումը:

2.2 Մրցույթը հաղթելու դեպքում Կողմերի անունից պայմանագրերի կնքման և պայմանագրերի սպասարկման հետ կապված գործերի վարումը կիրականացվի ներկայացուցչի միջոցով Գործընկեր 1-ի կողմից տրված լիազորագրով:

## 3.Վճարումները

3.1. Գործընկեր 1-ի կողմից նախատեսվում է իրականացնել տեխ.հսկողության աշխատանքներ պայմանագրի արժեքի -83%- չափով, Գործընկեր 2-ի կողմից՝-17%- չափով:

3.2. Կողմերի և պատվիրատուի միջև կնքված պայմանագրից ստացման ենթակա բոլոր գումարները ենթակա են վճարման Գործընկեր -1-ին, որի կողմից կատարվում է Գործընկեր -2-ի վճարումները համաձայն վերջինիս կողմից ներկայացված կատարողական ակտերի:

3.3 Սույն պայմանագրից բխող հարկային պարտավորությունները ենթակա են կատարման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:

## 4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Կողմերից յուրաքնաչյուրը պատասխանատվություն է կրում իր կողմից ստանձնաց բոլոր պարտավորությունների համար /այդպիսիք սահմանված լինելու դեպքում/՝ անկախ դրանց ծագման հիմքերից:

4.2. Կողմերը միասին պարտավորվում են պայմանագրի շրջանակներում պատշաճ կատարել դրանցով ստանձնած պարտավորությունները: Կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում իր մասնակցության չափով:

## 5. Պայմանագրի գործունեության ժամկետը և լուծելու կարգը

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Ծրագրերի կատարման հետ կապված պարտավորությունների պատշաճ իրականացումը:

5.2. Սույն պայմանագրից հրաժարվելու մասին Կողմի դիմումը պետք է տրվի ոչ ուշ, քան պայմանագրից նրա ենթադրվող դուրս գալուց երկու ամիս առաջ:

## 6 Այլ պայմաններ

6.1.Սույն պայմանագիրը կնքված է 2 /երկու/ օրինակներից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Կողմին տրվում է մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գործընկեր-1

<<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ

ք.Երևան, Վ.Վաղարշյան 12

ՀՎՀՀ 00012859

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

հ/հ 11500 00088680300

Տնօրեն՝ Յուրիկ Ջավադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Գործընկեր-2

«Թունել» ՍՊԸ

ք.Երևան, Մոսկովյան 31, բն.20

ՀՎՀՀ 02542333

“Էվոկաբանկ” ՓԲԸ

Հ/հ 1660000445850100

Տնօրեն՝ Ալեքսանդր Սանահյան

(ստորագրություն)

Կ.Տ.